**Արձանագրություն N 2**
ՄՄԾ ԷԱՃԱՊՁԲ-24/28 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

02 մայիսի 2024թ
ժամը 12:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝
նախագահ՝ Արբակ Սանամյանը,
անդամ՝ Լիլիթ Աճեմյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան
Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ Սողոմոն Մաթևոսյանը

## I. Հայտերի բացման մասին

---

(Արբակ Սանամյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա/ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան գնումների էլեկտրոնային (eauction.armeps.am) աճուրդի համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| N | *Մասնակցի անվանումը* | | *Մասնակցի հասցեն և կապի միջոցները* |
|---|---|---|---|
| 1 | *2* | | *3* |
| 1 | «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ | - | ք. Երևան, Քաջազնունի փ. 11/ 23, հեռ. 096 62 89 94, rima.nazaretyan@annarka.am |
| 2 | «ԱՅՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ | - | ք. Երևան, Լենինգրադյան փող. 23/11 շենք, 96 տարածք, հեռ. +37460700111, info@isolutions.am |
| 3 | «ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ | - | ք. Երևան, Մոլդովական 50/4, հեռ 077666566, footmafor@gmail.com |

բ/ Մասնակցի կողմից աճուրդի ամփոփման ժամկետի ավարտին առաջարկված գները ըստ չափաբաժինների հետևյալն է.

| Չափաբ. համարը | Գնման առարկան | | | Մասնակիցների անվանումները և առաջարկած գինը՝ առանց ԱԱՀ-ի (ՀՀ դրամ) | | | Գնման գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | Չափի միավորը | քանակը | «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ | «ԱՅՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ | «ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1. | անխափան սնուցման աղբյուրի /անխափան սնուցման համակարգի/ | հատ | 1 | 2200000 | 2770850 | 45000000 | 3500000 |

գ/ Գնման առարկայի բնութագրերի հիմնավորումներ չեն պահանջվել և չեն ներկայացվել, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

## II. Հայտերի գնահատման մասին

---

(Արբակ Սանամյան)

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց աճուրդին ներկայացված հայտերը՝ այդ թվում 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ -ի հայտով ներկայացված փաստաթղթերը, այդ թվում

առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը և արձանագրեց, որ հայտում կա անհամապատասխանություն հրավերով սահմանված պահանջների նկատմամբ, մասնավորապես.

ա/ «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ կողմից 1-ին չափաբաժնի համար առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը՝ ապրանքի ամբողջական նկարագիրը չի ներառում առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մոդելը/մակնիշը, արտադրողի անվանումը (նշված սյունյակներում լրացված է չափաբաժնի անվանումը), անհրաժեշտ է լրացնել առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մոդելը/մակնիշը, արտադրողի անվանումը:

բ/ էլեկտրոնային (eauction.armeps.am) աճուրդի համակարգի կողմից մերժվել է «ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ կողմից ներկայացրած հայտը հետևյալ հիմնավորմամբ՝ առաջարկված գինը գերազանցում է հրավերով սահմանված գնման գինը:

2.1 Գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա/ մերժել համակարգի կողմից մերժված, 2-րդ և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերը հրավերի 8.9 կետով սահմանված պահանջի համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ - 0:

3. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները, որոշեց.

ա/ հրավերի 8.11 կետով սահմանված պահանջների համաձայն կասեցնել հանձնաժողովի նիստը մեկ աշխատանքային օրով և հրավերով սահմանված կարգով՝ համակարգի միջոցով ծանուցել «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

բ/ ընթացակարգի հայտերի գնահատման նպատակով գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել 2024թ. մայիսի 6-ին ժամը 10:40-ին ք. Երևան, Նալբանդյան 13, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Արբակ Սանամյան

անդամ՝ _____ Լիլիթ Աճեմյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## շահերի բախման բացակայության մասին

ք. Երևան 02 մայիսի 2024թ.

ՄՍԾ ԷԱՃԱՊՁԲ-24/28 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Արբակ Սանամյանս, անդամ՝ Լիլիթ Աճեմյանս հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Ջանջուղազյանս նշված ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտարարում ենք, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Հանձնաժողովի

նախագահ _____ Արբակ Սանամյան

անդամ՝ _____ Լիլիթ Աճեմյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան

**Արձանագրություն N 3**
ՄՄԾ ԷԱՃԱՊՁԲ-24/28 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

06 մայիսի 2024թ
ժամը 10:40

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նիստը նախագահող՝ Սողոմոն Մաթևոսյանը,
անդամ՝ Լիլիթ Աճեմյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան
Բացակայում էր հանձնաժողովի նախագահ՝ Արբակ Սանամյանը

**I. Հայտի գնահատման արդյունքների մասին**

---

(Սողոմոն Մաթևոսյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

Սահմանված կարգով և ժամկետում «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ -ն հանձնաժողովին է ներկայացրել հայտով ներկայացրած փաստաթղթի շտկված տարբերակը:

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց մասնակցի կողմից ներկայացրած շտկված փաստաթուղթը և արձանագրեց, որ ներկայացրած շտկված փաստաթղթով առաջարկվել է «AEC IST7-20» մոդելի անխափան սնուցման սարք, որի հիմնական պարամետրերից մեկը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ մասնավորապես. հրավերով սահմանված է մարտկոցների տեսակը՝ VRLA առնվազն 40 հատ 12V, ինչի փոխարեն մասնակիցը առաջարկել է 36*9AH/12V մարտկոցներ, ինչը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ - 0:

**II. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների ամփոփման մասին**

---

(Սողոմոն Մաթևոսյան)

3. Հիմք ընդունելով վերոգրյալը, ղեկավարվելով հրավերի 1-ին մասի 8.11 կետի պահանջներով գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա/ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը գնահատել անբավարար:

բ/ մերժել «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը հրավերի 1-ին մասի 8.11 կետի պահանջի համաձայն:

գ/ գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նիստը նախագահող _____ Սողոմոն Մաթևոսյան

անդամ՝ _____ Լիլիթ Աճեմյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

շահերի բախման բացակայության մասին

ք. Երևան 06 մայիսի 2024թ.

ՄՍԾ ԷԱՃԱՊՁԲ-24/28 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամ՝ Սողոմոն Մաթևոսյանս նշված ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտարարում եմ, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունեմ շահերի բախում:

Հանձնաժողովի
անդամ՝ Սողոմոն Մաթևոսյան